ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2015թ. N-- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Արաբկիր 25-րդ փողոցն անվանակոչել բանաստեղծ, հրապարակախոս, բժիշկ Ռուբեն Սևակի անվամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանաստեղծ, հրապարակախոս, բժիշկ Ռուբեն Սևակը ծնվել է 1885թ. փետրվարի 15-ին Կոստանդնուպոլսի Սիլիվրի գյուղում: Սովորել է տեղի Ասքանազյան նախակրթարանում, այնուհետև՝ Պարտիզակի ամերիկյան վարժարանում:

1905թ. ավարտել է Կոստանդնուպոլսի Պերպերյան վարժարանը, 1911թ.՝ Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1905թ. «Մասիս» հանդեսում տպագրվել է առաջին՝ «Բաժանման խոսքեր» բանաստեղծությունը, 1907թ.՝ «Տարի մը վերջ» պատմվածքը, 1910թ.՝ «Կարմիր գիրք» ժողովածուն, որտեղ ամփոփված է 3 պոեմ՝ «Ջարդի խենթը», «Թրքուհին», «Մարդերգություն»: Հետագայում գրել է «Դրամին աղոթքը» (1907թ.), «Կարմիր դրոշակը» (1909թ.) բանաստեղծությունները և «Այս դանակը» (1909թ.), «Թրուպադորները» (1910թ.), «Փողոց ավլողը» (1911թ.) և այլ պոեմներ: Գրողի քնարերգության մեջ նշանակալի տեղ են գրավում նաև սիրային երկերը:

1911-1914 թթ. աշխատել է Լոզանի հիվանդանոցներից մեկում: Ուսման տարիներին գործերը տպագրել է արևմտահայ «Բյուզանդիոն», «Արևելյան մամուլ», «Բազմավեպ», «Ամենուն տարեցույց» պարբերականներում:

1915թ. վերադարձել է Կոստանդնուպոլիս և, որպես զինվորական բժիշկ, զորակոչվել է թուրքական բանակ: Որոշ ժամանակ անց ձերբակալվել և աքսորվել է թուրքական Չանղրը բնակավայր:

Եղել է Մեծ Եղեռնի զոհ, նահատակվել աքսորի ճանապարհին:

Բանաստեղծ, հրապարակախոս, բժիշկ Ռուբեն Սևակի անվամբ Երևան քաղաքում փողոց անվանակոչելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել «Չիլինգարյան /Մամիկոնյան/ պատմաազգագրական» հասարակական կազմակերպության նախագահ Մելս Չիլինգարյանի և Հայաստանի գրողների միության նախագահ Էդ. Միլիտոնյանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Սևակի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռուբեն Սևակի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ